S.M. BAKHSHYAN, S.A. MKRTCHYAN, A.S. TADEVOSYAN

PROSPECTS FOR SUSTAINABLE DEVELOPMENT OF THE DOMESTIC MARKET OF CABLE BASED ON COPPER

Armenia has all the real prerequisites, in case of its own production of its copper to become the region's main producer and exporter in the international cable market with its micro and macro economic results. The current situation of the domestic cable market, the production and economic activity of the largest cable company in the Armenian market, "IN-VI" LLC, and the market development prospects are analyzed.

Keywords: copper production, cable production, export markets, sustainable development.

ՀՏԴ 622.1:502.211

Դ.Ա. ԱՆԴՐՈՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՐԵՆԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՐԴԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Պարենային անվտանգության ապահովումն ազգային անվտանգության կարևորագույն բաղադրիչներից է: Այն իրավական, կազմակերպական, նյութատեխնիկական և այլ բնույթի միջոցառումների համալիր է, որն ուղղված է անհրաժեշտ որակի և բավարար քանակությամբ, առողջության համար անվտանգ, լիարժեք պարենով ապահովմանը, որը հասանելի է հասարակության յուրաքանչյուր անդամի, այդ թվում՝ բնակչության առավել խոցելի հատվածների համար, և կարող է սպառվել նրանց կողմից ցանկացած պահի և ցանկացած իրավիճակում: Հոդվածում դիտարկվում են ՀՀ պարենային անվտանգության խնդիրները:

Առանցքային բառեր. պարենային անվտանգություն, պարենային ինքնաբավություն, պարենային հաշվեկշիռ, պարենային զամբյուղ:

«Պարենային անվտանգությունն ապահովված է այն դեպքում, երբ բոլոր մարդիկ մշտապես ունեն ֆիզիկական և տնտեսական հնարավորություն՝ իրենց նախապատվությունների համաձայն, անհրաժեշտ քանակի ու որակի անվտանգ, սննդարար պարենամթերք ձեռք բերելու, ակտիվ և առողջ կյանք վարելու համար» [1]:

Պարենային հաշվեկշիռը (այսուհետ՝ հաշվեկշիռ) ագրեգացված և վերլուծական ցուցանիշների համակարգ է, որը ներկայացնում է երկրի պարենամթերքի հիմնական տեսակների ձևավորման աղբյուրների, առաջարկի և դրանց օգտագործման ուղղությունների վերաբերյալ համապարփակ տեղեկատվություն տրված ժամանակահատվածի համար՝ տարեկան կտրվածքով: Հաշվեկշիռը ցույց է տալիս պարենամթերքի շարժն արտադրության պահից մինչև վերջնական օգտա-

գործում և հնարավորություն ընձեռում՝ գնահատելու ներմուծման պահանջարկը, սահմանելու պարենամթերքի օգտագործման մասնաբաժինը և կանխատեսելու ապրանքների շուկաների զարգացման իրավիճակները:

Երկրի պարենային անվտանգության մակարդակի (ՊԱՄ) բնորոշման հիմնական ցուցանիշը պարենամթերքի ինքնաբավության մակարդակն է, որը ցույց է տալիս երկրի տվյալ ապրանքի նկատմամբ պահանջարկի բավարարման աստիճանը սեփական միջոցների հաշվին և հաշվարկվում է տոկոսներով՝ հետևյալ բանաձևով.

Արտադրություն / (Արտադրություն + Ներմուծում - Արտահանում):

Հաշվեկշռում ընդգրկվող ապրանքախմբերի կազմը պայմանավորված է երկրում առավել լայն սպառում ունեցող ապրանքատեսակներով: Ըստ այդմ, յուրաքանչյուր տարի հաշվեկշիռ է կազմվում հետևյալ 21 ապրանքախմբերի համար՝ ցորեն, տարեկան, գարի, վարսակ, եգիպտացորեն, բրինձ, այլ հատիկավորներ, կարտոֆիլ, բանջարեղեն, միրգ (բացի խաղողից), հատիկաընդեղենային մշակաբույսեր, բուսական յուղ, շաքար, ձու, կաթ, տավարի, խոզի, ոչխարի, այծի, թռչնի միս, ձուկ, խաղող:

Երկրների պարենային անվտանգության դիրքը գնահատվում է պարենային անվտանգության գլոբալ ինդեքսով, որը բաղկացած է պարենամթերքի մատչելիություն, հասանելիություն, որակ, անվտանգություն և կայունություն բաղադրիչներից, որոնցից յուրաքանչյուրը ձևավորվում է մի քանի գործոններով [2]:

Պարենային անվտանգության հենքային հասկացություններից մեկը պարենային զամբյուղն է կամ առաջնային սպառում ունեցող սննդամթերքների անվանացանկն ու սպառման նորմերը, որոնց հիման վրա հաշվարկվում է նվազագույն պարենային զամբյուղի արժեքը, որը ՀՀ-ի պայմաններում նվազագույն սպառողական զամբյուղի հիմնական բաղադրիչն է:

«Պարենային անվտանգության ապահովման հայեցակարգում» ներկայացված են նաև ՀՀ առողջապահության նախարարության կողմից մշակած նվազագույն պարենային զամբյուղի վերաբերյալ առաջարկությունները:

Աղ. 1-ում ներկայացված է ՀՀ առողջապահության նախարարության կողմից մշակված սննդամթերքի կազմի, կառուցվածքի և էներգետիկայի ցուցանիշների վրա հիմնված 2021 թ.-ի նվազագույն սպառողական զամբյուղի արժեքը [3]:

Աղյուսակ 1

Նվազագույն սպառողական զամբյուղի արժեքը 2021թ.

Հ/հ	Պարենամթերքի անվանումը	Օրական սպառման նորման 1 շնչի հաշ-վով, կգ	Սպառման նորմը 1 շնչի հաշ-վով, կգ./տարի	Էներգետի կան 1 շնչի հաշվով, կկալ/օր	Միավորի գինը, դրամ	Տարեկան նորմայի արժեքը 1 շնչի հաշ-վով, դրամ
1	Հացամթերք, այդ թվում՝	0.355		992.2		85587.9
1.1	Հաց	0.25	91.3	622.5	559.0	51036.7
1.2	Ալյուր	0.02	7.3	70.6	449.7	3282.8
1.3	Մակարոնեղեն	0.015	5.5	55	639.2	3515.6
1.4	ձավարեղեն (բրինձ)	0.05	18.3	175.5	876.5	16040.0
1.5	ընդեղեն (լոբեղեն)	0.02	7.3	68.6	1604.5	11712.9
2	Մսամթերք (տավարի միս)	0.1	36.5	203	2888.1	105415.7
3	Կաթնամթերք, այդ թվում՝			339.7		93917.9
3.1	կաթ, լիտր	0.2	73	122	381.4	27842.2
3.2	Կաթնաշոռ	0.01	3.7	7.5	2465.2	9121.2
3.3	կենդանական յուղ	0.02	7.3	143.4	5236.9	38229.4
3.4	Պանիր	0.025	9.1	66.8	2057.7	18725.1
4	Կարտոֆիլ	0.25	91.3	167.5	196.5	17940.5
5	Բանջարեղեն	0.3	109.5	87	172.0	18834.0
6	Միրգ (խնձոր)	0.2	73	96	646.2	47172.6
7	Շաքար	0.05	18.3	193.5	371.4	6796.6
9	Բուսական յուղ	0.02	7.3	176.8	1 042.7	7611.7
10	Մարգարին	0.01	3.7	72	1081.5	4001.6
11	Ձուկ	0.03	11	44.4	2713.2	29845.2
	Ընդամենը			**2412.1 կկալ**		**431796.6**
Պարենային զամբյուղի արժեքը՝ տարեկան կտրվածքով				431896.6 դրամ		
ամսական կտրվածքով				35983.0 դրամ		
Նվազագույն սպառողական զամբյուղի արժեքը՝ տարե-կան կտրվածքով				798823.7 դրամ (1.85 գործ.)		
ամսական կտրվածքով				66568.6 դրամ		

Ըստ ՄԱԿ-ի պարենի և գյուղատնտեսության կազմակերպության (ՊԳԿ)՝ պարենային զամբյուղի կազմի և կառուցվածքի սահմանման հիմքը մարդու օրգանիզմի կենսագործունեության համար անհրաժեշտ սննդային հիմնական նյութերի և էներգիայի ֆիզիոլոգիական պահանջն է և գիտականորեն ընդունված սնուցման հիմնական սկզբունքը՝ սննդային հիմնական բաղադրիչների (սպիտակուցներ, ճարպեր, ածխածիններ՝ 1:1:4 հարաբերակցությամբ) և կենսա-

բանական ակտիվ նյութերի որակական և քանակական օպտիմալ հարաբերակցությունը:

Համաշխարհային բանկի մեթոդաբանությամբ ձևավորված նվազագույն պարենային զամբյուղը հիմք է աղքատության պարենային գծի սահմանման համար: Համաձայն ՀՀ ԱՎԾ-ի մեթոդաբանության՝ աղքատության գիծը սահմանվում է որպես նվազագույն սպառողական զամբյուղի դրամական արժեք, որը հասարակությունում ձևավորված կյանքի նվազագույն մակարդակ ապահովող ապրանքների ու ծառայությունների համադրությունն է [4] (աղ. 2):

Աղյուսակ 2

Նվազագույն սպառողական զամբյուղի արժեքը 2021թ.

Պարենային զամբյուղի արժեքը	27772.7 դրամ	30927.4 դրամ
Նվազագույն սպառողական զամբյուղի արժեքը	51379.5 դրամ	57215.7 դրամ (գործակից 1.85)

ՀՀ էկոնոմիկայի նախարարության ազգային պարենային հաշվեկշռի տվյալների վերլուծությունը վկայում է, որ, էներգետիկ արժեքով հաշվարկված, կենսապես կարևորագույն պարենամթերքի ինքնաբավության մակարդակը 2019 թվականի տվյալներով կազմել է շուրջ 52.5%:

ՀՀ ինքնաբավության բարձր մակարդակ է ապահովվում (ՊԱՄ≥100%) կարտոֆիլի, բանջարաբոստանային մշակաբույսերի, պտղի, խաղողի, ոչխարի և այծի մսի, ձվի, ձկան ուղղությամբ, միջինից բարձր ինքնաբավության մակարդակ է ապահովվում (80%≤ՊԱՄ≤100%) տավարի և խոզի մսի, կաթի ու կաթնամթերքի համար, իսկ ցորենի, հատիկաընդեղեն մշակաբույսերի, բուսական յուղի, թռչնի մսի ինքնաբավության մակարդակը շարունակում է մնալ ցածր (ՊԱՄ≤80%):

ՀՀ ազգային պարենային հաշվեկշռի 2017-2021 թվ., ըստ օպերատիվ գնահատումների, առաջին անհրաժեշտության պարենային ապրանքների ինքնաբավության մակարդակի տվյալները հետևյալն են [5] (աղ. 3):

Պարենային անվտանգությունը ենթադրում է երկրի բնակչության լրիվ ինքնաբավարարումը տեղական պարենամթերքներով, սակայն հնարավոր է համարվում նաև որոշ պարենամթերքեների անբավարարության պայմաններում արտաքին մատակարարումների հաշվին դրանց համալրումը:

2014-2020 թթ. ԵԱՏՄ մի քանի երկրներ մտել են պարենային անվտանգության աճի բարձր ցուցանիշներ ապահովող առաջատար երկրների հնգյակի մեջ: Այսպես, Ռուսաստանում ինդեքսի աճը կազմել է 10.7%, Բելառուսում՝ 8%, Ղազախստանում՝ 7.4%, ինչն ապահովել է պարենային անվտանգության ինդեքսի համապատասխանաբար՝ 73.7%, 73.8% և 70.8% արժեքները:

Աղյուսակ 3

ՀՀ պարենային ապրանքների ինքնաբավության մակարդակը

Առաջին անհրաժեշտության պարենային ապրանքներ	Ինքնաբավության մակարդակը, %				
	2017	2018	2019	2020	2021
Ցորեն	33.2	31.5	25.9	24.4	23.2
Կարտոֆիլ	102.6	102.6	101.1	101.1	111.7
Բանջարեղեն և բոստանային մշակաբույսեր	102.5	104.7	102.4	103.9	105.6
Պտուղ և հատապտուղ	109.7	108.9	104.0	98.2	114.4
Խաղող	106.2	104.8	103.6	108.0	106.7
Հատիկաընդեղենային մշակաբույսեր	49.7	38.6	38.2	37.3	37.3
Բուսական յուղ	4.3	2.2	1.5	0.9	0.6
Շաքար	65.2	68.6	73.0	38.0	33.9
Ձու	98.2	99.5	100.0	100.3	98.8
Կաթ	91.2	86.8	84.3	82.0	87.7
Տավարի միս	91.5	89.2	90.4	87.3	92.2
Խոզի միս	58.0	53.3	55.5	45.1	53.2
Ոչխարի և այծի միս	138.9	128.6	113.8	100.4	100.4
Թռչնի միս	22.5	26.6	21.7	23.9	26.7
Ձուկ	101.8	109.0	113.1	148.4	143.7

2021 թ.-ի արդյունքներով Բելառուսը, Ղազախստանը և Ռուսաստանը գլոբալ վարկանիշում զբաղեցրել են համապատասխանաբար՝ 36, 41 և 23-րդ տեղերը:

2015-2021 թթ. ԵԱՏՄ գյուղատնտեսության արտադրանքի աճը կազմել է 12%: Առավել բարձր ցուցանիշ են ապահովել Ղազախստանը՝ 16% և Ռուսաստանը՝ 13%: Բելառուսում և Ղրղզստանում աճը կազմել է համապատասխանաբար՝ 7.5% և 7%: Հայաստանում դիտվել է գյուղատնտեսության 4%-ոց անկում:

2021 թ. ԵԱՏՄ է ներմուծվել 6.1 մլրդ ԱՄՆ դոլարի նյութատեխնիկական ռեսուրս, ինչն ավելի քան 1.5 անգամ գերազանցել է 2015 թ.-ի ցուցանիշը: Այդ գումարից 3.8 մլրդ ԱՄՆ դոլարը (61%) բաժին է ընկել բուսաբուծությանը, ինչը դիտարկվող ժամանակահատվածում աճել է 1.8 անգամ:

Բուսաբուծության ճյուղի համար ներմուծված արտադրական միջոցների առավելագույն մասը՝ 46%, բաժին է ընկել գյուղատնտեսական տեխնիկային (հիմնականում կոմբայններ), կազմելով 1.7 մլրդ ԱՄՆ դոլար:

Գյուղատնտեսական մշակաբույսերի սերմեր և թունաքիմիկատներ ձեռք են բերվել համապատասխանաբար 24% և 26%, մոտավորապես մեկ մլրդ ԱՄՆ դոլար ընդհանուր արժեքով: Պարարտանյութերին բաժին է ընկել բուսաբուծության ռեսուրսների ներմուծման արժեքի 5%-ը: 2021 թ.-ին դրանցում առավել մեծ են արևածաղկի, եգիպտացորենի և բանջարեղենի, շաքարի ճակնդեղի սերմերի ծախսերը, համապատասխանաբար կազմելով՝ 268.2 մլն ԱՄՆ դոլար, 157.7 մլն ԱՄՆ դոլար և 124.1 մլն ԱՄՆ դոլար [6]:

Չափազանց բարձր է նաև շաքարի ճակնդեղի ներմուծվող սերմերի կախվածությունը: ԵԱՏՄ միությունում այն գնահատվում է 91%: Այսպիսով, միությունում աճեցված շաքարի ճակնդեղից և արևածաղկից ստացվող արևածաղկի յուղի և շաքարավազի գծով լրիվ ինքնապահովման հասնելը խիստ պայմանական է, եթե արտադրական շղթայում բացառվի ներմուծման բացադրիչը:

Բացի այդ, Հայաստանը լրիվ կախվածություն ունի եգիպտացորենի և ոլոռի սերմերի, Բելառուսը՝ ռապսի, Ղազախստանը՝ եգիպտացորենի: Համանման իրավիճակ է նաև անասնաբուծությունում: 2021 թ. ոլորտի կայուն գործունակության համար ձեռք է բերվել 2.36 մլրդ ԱՄՆ դոլարի ռեսուրս: Ընդ որում, ներմուծման ավելի քան 52%-ը բաժին է ընկել կերերին (1.2 մլրդ ԱՄՆ դոլար): Տոհմական կազմի ձեռքբերման մասը կազմել է 26% կամ 609 մլն ԱՄՆ դոլար: Մասնավորապես, 2021 թ.-ին ներմուծվել են 395 մլն ԱՄՆ դոլարի ինկուբացիոն ձու և խոշոր եղջերավոր անասունների տոհմական խմբաքանակ:

Ձգտելով առավելագույն արտադրողականության և շահութաբերության ստացմանը, բազում արտադրողներ անցնում են օտարերկրյա հիբրիդների և ցեղատեսակների օգտագործմանը՝ կորցնելով տեղական պայմաններին հարմարված և լավ բնութագրերով օժտված ավանդաբար բուծվող տեսակները:

Մեկ այլ օրինակ է թռչնաբուծությունը, որում ամբողջ մայրական կազմը ներմուծվում է երրորդ երկրներից, ինչը հանգեցնում է ներմուծման 100%-ոց կախվածության:

Այսպիսով, պարենային անվտանգության համակարգում կարևոր է սննդի արտադրության ամբողջական շղթան, որը ներառում է ոչ միայն տեղում դրա արտադրությունը, այլև արտադրությունը տեղական սերմերով, մայրական կազմով:

Դրա համար անհրաժեշտ է.

• վերականգնել ավանդական սերմատեսակների շտեմարանը,

• մեծ ուշադրություն դարձնել տեսակների սելեկտիվ աշխատանքներին,

• ստեղծել հողերի արդյունավետ օգտագործման գործուն մեխանիզմներ,

• ստեղծել ինքնաբավության ցածր մակարդակ ունեցող պարենի արտադրման համար բարենպաստ պայմաններ (օրինակ՝ սուբսիդավորել կամ սահմանել այդ ապրանքների համար վաճառքի նվազագույն գներ):

• խստորեն վերահսկել գենետիկորեն ձևափոխված օրգանիզմներ (ԳՁՕ) պարունակող ապրանքների և սերմերի ներմուծման գործընթացը՝ աստիճանաբար արգելելով դրանց օգտագործումը ՀՀ-ում:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. https://www.fao.org/3/w3613e/w3613e00.htm
2. http://www.fao.org/fileadmin/templates/cfs/Docs0910/ReformDoc/CFS_2009_2_Rev_2_E_K7197.pdf

3. https://armstat.am/am/?nid=107#itm_17
4. https://armstat.am/am/?nid=81&id=2461
5. https://www.armstat.am/am/?nid=82&id=2500
6. http://www.eurasiancommission.org/ru/act/prom_i_agroprom/dep_agroprom/agroprom/Documents/.pdf

Д.А. АНДРОЯН

ПРОБЛЕМЫ ПРОДОВОЛЬСТВЕННОЙ БЕЗОПАСНОСТИ АРМЕНИИ

Обеспечение продовольственной безопасности является одной из важнейших составляющих национальной безопасности. Это комплекс правовых, организационных, материально-технических и иных мер, направленных на обеспечение необходимого качества и достаточного количества пищевых продуктов, безопасных для здоровья и полноценных, доступных каждому члену общества, включая наиболее уязвимые слои населения, и способных потребляться ими в любое время и в любой ситуации, включая чрезвычайные ситуации и военное положение.

Статья посвящена проблемам продовольственной безопасности Армении.

Ключевые слова: продовольственная безопасность, продовольственная самообеспеченность, продовольственный баланс, продовольственная корзина.

D.A. ANDROYAN

PROBLEMS OF FOOD SECURITY IN ARMENIA

Ensuring food security is one of the most important components of national security. This is a set of legal, organizational, logistical and other measures aimed at ensuring the necessary quality and sufficient quantity of food products that are safe for health and complete, accessible to every member of the society, including the most vulnerable segments of the population, and capable of being consumed by them at any time and in any situation, including emergencies and martial law.

The article deals with the problems of food security in the Republic of Armenia.

Keywords: food security, food self-sufficiency, food balance, food basket.